




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

515713
P-43

25 AUG 2009

14 NOV 2009

ՀԵԼՈՎ

**ԱՎԵԼԻ ՌԻՃԳԻՆ ՀԱՐՎԱԾԵՆՔ
ԿՈՒԼԱԿԱՅԻՆ ԱԳԵՆՏՈՒՐԱՅԻՆ
ԿՈՒԼԽՈԶՆԵՐՈՒՄ**

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ПОСТОВОЗДЕНИ
Академия Наук
СССР

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԴ, ԿԵՆՏՐՈՆԱԿ, ՀՐԱՏԱՐԱԿԶ,
ՄՈՍԿՎԱ

1931

10 1 MAR 2013

6217

Քարգւլ. Ս. Է.



60815-67

Главлит № А-89178 Зак. № 672 Тираж 6.000
Книжная ф-ка Центриздата Народов СССР. Москва.
Шлюзовая набережная, 10.

Գյուղատնտեսութեան կոլեկտիվացման ասպարիզում վերջին յերկու տարվա ընթացքում մեր ունեցած հաջողութիւնները հանդիսանում են մեր կուսակցութեան, բանվոր դասակարգի և ամբողջ աշխատավորութեան մեծագույն նվաճումը:

Գյուղացիութեան չքավոր-միջակային մասսաները վերջնականապէս խզում են կապերը ցարիզմից ժառանգած սակավ արտադրողական աշխատանքի, աղքատութեան և ստրկութեան հետ և անցնում են կոլեկտիվ աշխատանքի, կոլեկտիվ տնտեսութեան, նոր կյանքի: «ԽՍՀՄ»-յան զարգացման մեջ տեղի ունեցած բեկման համաշխարհային-պատմական նշանակութիւնը կայանում է նրանում, Վոր հացահատիկային կարեւորագույն ռաշոններում միջակ մասսաների խոշոր մասը, հետեւելով չքավորներին, հասկացավ խոշոր

հասարակական տնտեսութեան առավելութիւնները, կամովին միանալով կոլխոզներին մեջ և ցանքսը անցկացնելով կոլեկտիվ դաշտերում, շրջադարձ կատարեց դեպի սոցիալիստական ուղին» (XVI համագումարի բանաձևից)։

Կուսակցութեան XVI համագումարից հետո անցած ամիսները դարձյալ ու դարձյալ հաստատում են, վոր գյուղացիութեան չքավոր-միջակային մասսաների շրջադարձը դեպի սոցիալիստական ուղին պատահական չէ, ժամանակավոր չէ, և վոր այդ շրջադարձը բղխում է մեր յերկրի սոցիալիստական զարգացման ամբողջ ընթացքից։ Ներկայումս մենք տեսնում ենք չքավորների ու միջակների նոր միլիոնների — լիակատար կամաւորութեան հիման վրա — ամսե ամիս աճող հոսանքը դեպի կոլխոզները։ Այս տարի (1931 թ.) կոլխոզները կընդգրկեն գյուղացիական տնտեսութեանների վոչ պակաս քան 50 տոկոսը։

Նոր 6—7 միլիոն չքավոր-միջակային տնտեսութեաններ յետամնաց, սակավարտադրողական, մանր անհատական տնտեսութեաններից անցնելու յեն խոշոր կոլեկտիվ, բարձր արտադրողական տնտեսութեան։

1931 թ. ավարտվելու յե հացահատիկային հիմնական ուսումների համատարած կոլեկտիվացումը։

Այդ ահագին հաջողութեանները կոլեկտիվացման գործում չի կարելի բաժանել այն հաջողութեաններից, վոր ունեցել է խորհրդային Միութեանը արդյունաբերութեան ասպարեզում։ 1931 թվականը տալիս է մեր տնտեսութեանը մի շարք նոր փաբրիկներ ու գործարաններ։

Կոլեկտիվացող գյուղատնտեսութեանը ստանում է հարյուր հազարավոր գյուղատնտեսական մեքենաներ, տրակտորներ, ավտոմոբիլներ, կոմբայններ։

Սոցիալիզմի կառուցման հաջողութեանները առաջացնում են պրոլետարիատի դա-

սակարգային թշնամիների — քաղաքի բուր-
ժուազիայի մնացորդների և կուլակուլթյան
կատաղի ընդդիմադրությունը: Գյուղում ղեռ
ևս գոյություն ունի աշխատավորության ամե-
նավտանգավոր թշնամին — կուլակուլթյունը,
ամենից ավելի վտանգավոր, վորովհետև կու-
լակները կատաղորեն ընդդիմադրում են
սոցիալիստական շինարարությանը:

«Կուլակները ամենագագանաբարո, ամե-
նակոպիտ, ամենավայրենի շահագործող-
ներն են, վորոնք ուրիշ յերկրների պատ-
մության մեջ շատ անգամ վերականգնել են
կալվածատերերի, թագավորների, տերտե-
րների, կապիտալիստների իշխանությունը...»

Այդ արյունարբուները հարստացել են
ժողովրդական կարիքի վրա՝ պատերազմի
ժամանակ նրանք հազարներով ու հարյուր
հազարներով փող են կուտակել, բարձրա-
ցելով հացի և այլ մթերքների գները: Այդ
սարդերը չաղացել են պատերազմի շնորհիվ
քայքայված գյուղացիների և սոված բան-

վորների հաշվին: Այդ տգորուկները աշխա-
տավորների արյունն ելին խմում, հարստա-
նալով այնքան ավելի, վորքան ավելի սո-
ված էր բանվորը քաղաքներում և ֆաբրիկ-
ներում: Այդ վամպիրները իրենց ձեռքն են
վերցնում կալվածատիրական հողերը, նրանք
նորից ստրկացնում են գյուղացիներին (Լե-
նին, հատոր XX):

Կուլակությունը — կապիտալիստական դա-
սակարգ է, մեր դասակարգային թշնամին է.
և վորքան ավելի հեռու և վճռականորեն հար-
ձակվում ենք մենք, կառուցելով սոցիալիզմ,
այնքան ավելի կատաղի յե նրա դիմադրու-
թյունը: Կուլակության սահմանափակման քա-
ղաքականությունից կուսակցությունը ան-
ցավ նրա, վորպես դասակարգի, լիկվիդացիայի
քաղաքականությանը — համատարած կոլեկ-
տիվացման հիման վրա: Դա նշանակում է,
վոր վոչնչացնելով կապիտալիստական տար-
րերը գյուղում համատարած կոլեկտիվաց-
ման հիման վրա, մենք հենց դրանով վոչն-

չացնում ենք կուլակութեան կրկին յերևան
գալու ամեն մի հնարավորութեան:

Գյուղացիական անհատական տնտեսու-
թյունը, վորը, ինչպես սովորեցնում եր
Լենինը, ամեն ժամ, ամեն որ, շարունակ կա-
պիտալիզմ ե ծնում, կորչում ե և փոխարին-
վում խոշոր կոլեկտիվ տնտեսութեամբ:

Միայն համատարած կոլեկտիվացման իրա-
կանացումը առմիշտ արմատախիլ ե անում
կուլակութեանը, միմիայն այդ հիման վրա
կարելի յե վերջնականապես և ընդմիշտ լիկ-
վիդացիայի յենթարկել կուլակութեանը,
վորպես դասակարգ:

Կուլակութեան, վորպես դասակարգի, հա-
մատարած կոլեկտիվացման հիման վրա լիկ-
վիդացիայի քաղաքականութեան անցնելը
բաց ե անում համաշխարհային-պատմական
նշանակութեան ունեցող նոր շրջան: Այդ
քաղաքականութեան անցնելը հնարավոր յի-
ղավ սոցիալիստական շինարարութեան մեջ
մեր ունեցած անագին տնտեսա-քաղաքական

հաջողութեաններին հիման վրա: Նա, այդ
անցումը, նախապատրաստված եր և ապա-
հովված ժողովրդական տնտեսութեան վար-
գացման ամբողջ ընթացքով, արդյունաբե-
րութեան, մանավանդ նրա առաջնորդող
ճյուղի — խոշոր արդյունաբերութեան վար-
գացման և ահման ամբողջ ընթացքով, սով-
խոգների ու կոլխոզների անորինակ հաջո-
ղութեամբ, այլ և գյուղացիութեան հիմնա-
կան մասսաների վճռական շրջադարձով
դեպի կոլխոզները: Յեւ, վոր գլխավորն ե,
այդ անցումը հնարավոր յեղավ կուսակցու-
թեան գլխավոր գծի անշեղ կիրառման հի-
ման վրա, կուսակցութեան գլխավոր գծից
բոլոր ու ամեն տեսակի թեքումների դեմ
մղված անհաշտ պայքարի հիման վրա:

Այժմ չքավոր-միջակային մասսաները
իրենք բանվոր դասակարգի ու նրա կուսակ-
ցութեան դեկավարութեամբ իրականացնում
են այդ քաղաքականութեանը, անողոք կռիվ
մղելով կուլակութեան դեմ:

կուլակությունը ամեն տե՛ղ միջոցներ ե հնարում կոլեկտիվացման, սոցիալիստական շինարարության դեմ պայքարելու համար: Թուլացնել կուլակի դեմ տարվող պայքարը—կնշանակի ոգնել կուլակին:

«Տեղ-տեղ ձայներ են լսվում համատարած կոլեկտիվացման քաղաքականությունից հրաժարվելու անհրաժեշտության մասին: Կան տեղեկություններ, վոր նույն իսկ մեր կուսակցության մեջ կան այդ «իդեալի» կողմնակիցներ: Բայց այդպես խոսել կարող են միայն այն մարդիկ, վորոնք կամա թե ակամա միացել են կոմունիզմի թշնամիներին: Համատարած կոլեկտիվացման մեթոդը այն անհրաժեշտ մեթոդն է, առանց վորի անհնարին է իրականացնել ԽՍՀՄ-յան բոլոր շրջանների կոլեկտիվացման հնգամյա պլանը: Ինչպե՛ս կարելի է հրաժարվել նրանից, առանց դավաճանելու կոմունիզմին, առանց դավաճանելու բանվոր դասակարգի և գյուղացիության շահերին» (Ստալին):

Այդ ուղորտունիւստները իրականում կուլակային ագենտուրա յեն հանդիսանում մեր կուսակցության և բանվոր դասակարգի մեջ: Նրանք իրականում կուլակի հետ են— ոգնում են նրան պայքարելու մեր կուսակցության գլխավոր գծի իրականացման դեմ: Նրանք չեն ուզում ընդունել, վոր սովխոգներն ու կոլխոզները գյուղացիական հիմնական մասսաները սոցիալիզմի կառուցման գործին ներգրավելու հիմնական միջոցն են հանդիսանում, գլխավոր ճանապարհը: Նրանք չեն ուզում ընդունել, վոր առանց կիրառելու կուլակության, վորպես դասակարգի, իրկվիդացիայի քաղաքականությունը — անհնարին է վերակառուցել գյուղը սոցիալիզմի հիմունքներով: Նրանք կարծում են, վոր գյուղը կարելի է սոցիալիզմի ուսերին գցել սուսիկ-փուսիկ, ինքնահոսով, առանց դասակարգային պայքարի, մենակ մատակարարման-կենցաղային կոոպերացիայի միջոցով, վորովհետև նրանք համոզված են,

վոր կուլակը ինքը կներաճի սոցիալիզմի մեջ» (Ստալին)։

Կուսակցությունը վճռական պայքար մղեց աջ թեքման դեմ, վորպես կուլակային ագենս-տուրայի դեմ, և մոբիլիզացիայի յենթարկեց բանվոր դասակարգը և գյուղացիութ-յան աշխատավոր մասսաները գլխավոր գծի կիրառման շուրջը։ Սակայն, աններելի սխալ կլինե՞ր կարծելը, թե մենք արդեն վերջ ենք տվել աջ վտանգին։ «Այ ոպոր-տունիզմի ուժը կայանում է մանրբուր-ժուական տարերքի ուժի մեջ, այն ճնշման ուժի մեջ, վոր կրում է կուսակցությունը ընդհանրապես կապիտալիստական տարրերի և մանավանդ—կուլակության կողմից։ Յեւ հենց այն պատճառով, վոր աջ թեքումը արտացոլում է մեռնող դասակարգերի հիմ-նական տարրերի ընդդիմադրությունը, հենց այդ պատճառով աջ թեքումը մեր ժամա-նակի հիմնական վտանգն է կուսակցության մեջ» (Ստալին)։

Բացի աջ թեքումից, վորը գլխավոր վտանգն է տվյալ ետապում, կուսակցությունը պայքարում է «ձախ» ոպորտունիզմի դեմ, վորը ոգնում է մեր դասակարգային թշնա-միներին պայքարելու կուսակցության և բանվոր դասակարգի դեմ։

«Ձախ» ոպորտունիզմը անտես է առնում միջակին, մոռանում է միջակի մասին, հար-կավոր չէ համարում պահպանել դաշինքը միջակի հետ։ «Ձախ» ոպորտունիստները ժխտում են, վոր բանվոր դասակարգը պետք է վերադաստիարակե գյուղացիության չքա-վոր-միջակային մասսաներին, ժխտում են, վոր հարկավոր է մեծ աշխատանք չքավոր-միջակային մասսաներին կոլեկտիվացման, գյուղատնտեսության սոցիալիստական վե-րակառուցման նախապատրաստելու համար։

Իրական աշխատանքի փոխարեն «ձա-խները» առաջ են մղում ճնշումը, բռնու-թյունը, վարչական միջոցները, կարծելով, թե միայն այդպիսի միջոցները կապահովեն

գյուղատնտեսութեան վերակառուցումը կու-
լեկտիվ հիմքերով:

Այդ հակալենինյան դրույթը գյուղացի-
ութեան չքավոր-միջակային մասսաների
վերաբերմամբ մեծագույն վնաս է հաս-
ցնում կոլեկտիվացման գործին, կասեցնում
է դաշինքը միջակի հետ, ոգնում է կուլակին:

«Ձախ» ուղորտունիստները սիրում են
խոսքերով չափից դուրս հեղափոխական
ձևանալ, իսկ իրականում փաստորեն աջ
գործեր են կատարում, ոգնում են կուլակին,
ինչպես և աջ ուղորտունիստները:

Յուրաքանչյուր կոմունիստի, բանվորի և
կոլխոզնիկի հիմնական խնդիրն է անխնա
պայքարել վոչ միայն կուլակության դեմ,
այլ և կուլակային ազենատուրայի դեմ իր
բոլոր արտահայտութուններով—ինչպես աջ,
նույնպես և «ձախ» ուղորտունիզմի դեմ:
Առանց այդ պայքարի անհնար է իրագոր-
ծել կոլեկտիվացման ահագին խնդիրները:
Խենք չեյինք հասնի այն հակայական հաջո-

ղություններին, վոր ունենք այսօր, յեթե
հետևողական խիստ պայքար չմղեյինք ուղոր-
տունիզմի դեմ: Այժմ ևս ուղորտունիստները
իրենց վիժեցնող աշխատանքով վնաս են հաս-
ցնում սոցիալիստական շինարարութեանը,
խանգարում են կոլեկտիվացմանը:

Պարտված ու մերկացված լինելով, իբրև
պրոլետարիատին թշնամի հոսանք, ուղոր-
տունիզմը քողարկվում է ձևական համա-
ձայնութեամբ կուսակցութեան գլխավոր գծի
հետ: Խոսքով ընդունելով կուսակցութեան
գլխավոր գիծը, ուղորտունիստները պրակ-
տիկայում կուսակցութեան գլխավոր գծի դեմ
են գնում, արգելք են հանդիսանում կոլեկ-
տիվացման գործին, դրանով իսկ պաշտպա-
նելով կուլակութեան շահերը:

Կենտրոնացնելով միլիոնավոր կոլխոզնիկ-
ների յեռանդն ու նախաձեռնությունը կու-
լտոյային շինարարութեան գործի վրա, պետք
է մերկացնել ուղորտունիստական տարրերին
կոլխոզային շարժման մեջ:

Առանց պայքարելու ամեն տեսակի ոպորտունիզմի և դեպի նա ցույց տրվող հաշտվողականութեան դեմ հնարավոր չեր լինի հասնել այն շինարարական հաջողութիւններին, վոր կան մեր յերկրում: Հնարավոր չեր լինի պահպանել կուսակցութեան լեւինյան շարքերի մաքրութիւնը, լեւինյան պատգամների անշեղ կիրառումը, առանց պայքարելու աջ ու «ձախ» ոպորտունիզմի դեմ և նրանց նկատմամբ ցույց տրվող հաշտվողականութեան դեմ:

Կազմակերպելով չքավոր-միջակային մասսաները կոլխոզների մեջ, իրագործելով համատարած կոլեկտիվացումը և այդ հիման վրա լիկվիդացիայի յենթարկելով կուլակութիւնը, կուսակցութիւնը թույլ չտվեց ոպորտունիստներին խանգարել և քայքայել կոլխոզային շինարարութիւնը: Միայն վճռականորեն պայքարելով ոպորտունիզմի, ոպորտունիստական պրակտիկայի և տրամադրութիւնների դեմ, մերկացնելով և մեկուսա-

ցնելով ոպորտունիստական տարրերին, վորպես կուլակութեան ազենատուրայի, մենք իրականապես զորակոչում ենք միլիոնավոր կոլխոզնիկներին կոլեկտիվացման խնդիրների հաջող իրագործման շուրջը:

Կուլակները և ոպորտունիստները աշխատում են վիժեցնել և կասեցնել կոլխոզային շարժումը: Կոլխոզները գյուղի սոցիալիստական շինարարութեան այն ճակատն են, վորին կուլակը աշխատում է հասցնել իր հարվածը, վորովհետև կոլխոզները կործանում են բերում կուլակին:

Վերջին ժամանակվա պրակտիկան ցույց է տալիս «մեռնող դասակարգերի հիմնական տարրերի» ճնշման այն ամբողջ ուժը, վորը արտահայտվում է կոլխոզային շարժման մեջ — առանձին կազմակերպութիւնների, առանձին կոլխոզների և առանձին աշխատողների ոպորտունիստական արարքների ձևով:

Ոպորտունիստական պրակտիկան կոլխոզային շարժման մեջ արտահայտվում է



բազմազան ձևերով: Սակայն հիմնականում
ոպորտունիստական պրակտիկան հանգում է
Նրան, վոր աշխատում է բթացնել մասսա-
ների դասակարգային աչալըջությունը և
արգելք հանդիսանալ կոլխոզային շարժմանը:
Կոլեկտիվացման գործի մեջ բանվոր դա-
սակարգին և Նրա կուսակցությանն է պատ-
կանում ղեկավարող դերը: Կուսակցությունը
կառուցում է կոլեկտիվացման հենակետեր
— մեքենա-տրակտորային կայաններ, ուղար-
կում է տասնյակ հազարավոր ինդուստրիալ
բանվորներ գյուղի չքավոր-միջակային մաս-
սաներին ոգնության, ծավալում է մասսայա-
կան աշխատանք համատարած կոլեկտիվաց-
ման նախապատրաստության և ավարտման
շուրջը: Այլ ոպորտունիստները ժխտում են
պրոլետարիատի կազմակերպող դերը գյուղա-
տնտեսության սոցիալիստական վերակա-
ռուցման գործում, ժխտում են չքավոր-միջա-
կային մասսաների շարժումը դեպի կոլխոզ-
ները գլխավորելու անհրաժեշտությունը:

Նրանք հույս են դնում ինքնահոսի վրա:
Նրանք անց են կացնում՝ կոլխոզները նոր
չքավոր ու միջակ անդամների առաջ փա-
կելու քաղաքականությունը: Նրանք արգելք
են հանդիսանում նոր անդամների ընդունե-
լությանը, ամբողջ ամիսներով, զանազան
պատրվակներով պահելով մենատնտեսավար-
ների հայտարարությունները:

Պարզ է, ուրեմն, վոր խոսքով ընդունե-
լով կուսակցության գլխավոր դիժը, ոպորտու-
նիստական տարրերը իրականում չեն ուզում
անցկացնել այն, արգելք են հանդիսանում
կոլեկտիվացման գործին:

Փոխանակ վճռական պայքար մղելու կու-
լակության դեմ, լիկվիդացիայի յենթարկե-
լով կուլակությունը, վորպես դասակարգ,
համատարած կոլեկտիվացման հիման վրա,
փոխանակ կազմակերպելու չքավորությունն
ու բատրակներին և բարձրացնելու Նրանց
ակտիվությունը, ոպորտունիստները ոգնում
են կուլակներին, թողնում Նրանց կոլխոզ-

ների մեջ, աչքաթող են անում աշխատանքը
չքափորների և բատրակների մեջ:

Փոխանակ պայքարելու աշխատանքային
դիսցիպլինայի վերելքի համար, թափվածու-
թյան, պորտաբուծության, ծուլության դեմ,
փոխանակ խրախուսելու ուղարնիկներին,
առաջ քաշելով նրանց, վորպես կոլխոգային
մասնայի լավագույն ներկայացուցիչների,
ոպորտունիստները թույլ են տալիս կոլխոզի
քայքայումը, զիջելով ծուլերին ու պորտա-
բուծներին:

Ոպորտունիստները, հետևելով կուլակա-
յին ագիտացիային, յերես են տալիս կոլխոզ-
նիկների յետամնաց մասին բերքի բաշխման
ժամանակ, անցկացնելով հավասարաբու-
թյուն, ուտոզների նորմաներ, փոխանակ
բաշխելու յեկամուտը միայն ամեն մի կոլ-
խոզնիկի թափած աշխատանքի քանակին ու
վորակին համեմատ:

Աջերի ու «ձախերի» ամբողջ ոպորտու-
նիստական պրակտիկան կոլխոզներում հա-

ցնում ե կոլխոզների քայքայմանը, կուլեկ-
տիվացման վիժեցմանը:

Կուսակցությունը և կառավարությունը
հավաքում են ազգաբնակչության միջոցները
ինդուստրիացման գործի համար, իսկ ոպոր-
տունիստները չեն կատարում այդ դիրեկ-
տիվները: Կոլխոզնիկները, հակառակ ոպորտու-
նիստներին և թերահավատներին, անցկացրին
առաջին բոյլշիկական գարունը, հաջողու-
թյամբ վերջացրին բերքահավաքը և յեռան-
դով պատրաստվում են յերկրորդ բոյլշի-
կական գարնանը:

Կոլխոզների զարգացման և ամրացման
կարևորագույն պայմաններից մեկն ե հան-
դիսանում կոլխոզնիկների արտադրողական
նախաձեռնության և ինքնագործնելության
բարձրացումը: Անցած տնտեսական տարում
կոլխոզնիկների ահագին մասսաները ցույց
տվին սոցիալիստական մրցման, հարվածայ-
նության, աշխատանքային վոզեկորության
նմուշներ: Յեվ փոխանակ այդ ինքնագործ-

նեյությունը և աշխատանքի սոցիալիստական մեթոդները կոլխոզներում գլխավորելու, ոպորտունիստները բյուրոկրատորեն մեկուսանում են կոլխոզային մասսայից և չեն ոգտագործում կոլխոզիկների ինքնագործ-
նեյության ուժը:

Կոլխոզները կազմում են իրենց արտա-
դրողական պլանները, գարնանացանի իրենց բանվորական ծրագրները, կազմակերպում են աշխատանքը այնպես, վորպեսզի վորքան կարելի յե ավելի արտադրողականորեն ոգ-
տագործվեն յուրաքանչյուր կոլխոզիկի ու-
ժերը, արտադրողական պլանների իրագործ-
ման մեջ ներգրավում են կոլխոզիկների ամբողջ մասսան, բրիգադային, խմբակային, ընդհանուր ժողովներում քննության են առ-
նում արտադրողական առաջադրանքները:

Կոլխոզները լավագույն կոլխոզիկներից բրիգադներ են կազմում և ուղարկում են ուրիշ կոլխոզներ աշխատանքի փորձով փո-

խանակվելու, ցանքսի պատրաստությունը ստուգելու համար:

Կոլխոզիկները մենատնտեսավարների հետ միասին քննում են, թե ինչպես ավելի լավ անցկացնեն գարնանացանը, ոգնում են մե-
նատնտեսավարներին կազմակերպել նոր կոլխոզներ:

Կոլխոզները լայնորեն ծավալում են մաս-
սայական աշխատանքը մենատնտեսավար չքավորների ու միջակների մեջ—նրանց կոլ-
խոզներ գրավելու նպատակով, ստեղծում են նախաձեռնող խմբակներ, պայքարելով կու-
լակային ազիտացիայի դեմ, կոլխոզ մտնե-
լուց առաջ գույքը ծախժխելու դեմ:

Կոլխոզիկները ստեղծում են սերմացուի ֆոնդեր, ժամանակին վերանորոգում են գյուղատնտեսական մեքենաները, կարգի յեն բերում լծասարքը, լրացնում և լավացնում են բանող անասուններին: Իսկ ոպորտունիստ-
ները կոլխոզներում հանգիստ սպասում են գարնան, վորը, նրանց կարծիքով, ինքն

ամեն ինչ կանի: Ոպորտունիստները չունեն
պարաստակաւութիւն: Նրանք ամեն ինչ
թողնում են ինքնահոսին:

Կուսակցութիւնը և խորհրդային կառու-
վարութիւնը վճռականորեն ձեռնարկել են
անասնաբուժական պրոբլեմի լուծմանը:
Ստեղծվում են խոշոր ապրանքա-կաթնային
ֆերմաներ: Կոլտոգները կազմակերպում են
համայնացված ապրանքային հոսեր, խո-
զանոցներ, լավացնում են տավարի ցեղերը,
կազմակերպում են լավ խնամք անասուն-
ների նկատմամբ, շինում են տաք ու հար-
մար շինութիւններ անասունների համար,
ոգտագործելով զրա համար բոլոր տեղական
հնարավորութիւնները:

Ոպորտունիստները դեմ են անասնաբու-
ժական դժվարութիւնների հաղթահարման
բոյլչեկական տեմպերին, ճիշտ այնպես,
ինչպէս դեմ ելին հացահատիկային պրոբ-
լեմի լուծման բոյլչեկական տեմպերին:

Մենք ունենք ոպորտունիստական պրակ-
տիկայի հազարավոր որինակներ կոլխոգային
աշխատանքի մեջ: Ահա, որինակ, ինչ եր
հաղորդում մի ընկեր, վոր գործուղված եր
Ուկրայնայի ռայոններից մեկը:

— Մենք հանդիպեցինք մի լիազորի և հար-
ցնում ենք նրան — ինչպէս ե գնում պայ-
քարը կուլակութեան դեմ, — վորովհետեւ այն
գյուղում, ուր նա աշխատում ե իբրեւ լիա-
զոր, աշխատանքը բացառիկ վատ ե գնում,
կոլխոգը քայքայվում ե, դիպցիպլինան բա-
ցակայում ե, կոլտոգնիկները հայտարարու-
թիւն են տալիս կոլխոգից դուրս գալու
մասին: Իսկ լիազորը ասում ե՝ «Մեզ մոտ
կուլակներ չկան»: Հարց ենք տալիս՝ «Մի
գուցե պողկուլաչնիկներ ե՞ն աշխատում»: —
«Քանի վոր կուլակներ չկան, — պատասխա-
նում ե լիազորը, — ուրեմն պողկուլաչնիկներ
ևս չկան»: Հարցրինք գյուղխորհրդի նախա-
գահին՝ «Ի՞նչ ե անում ձեզ մոտ կուլակու-

թյունը»։ Պատասխան ստացանք՝ «Սատանան գիտե, յերևի պայքարում ե»։

Ահա դասակարգային աչալը թուփյան հենց այդպիսի թուլացում ե նկատվում մի շարք ռայոններում։

Կոլխոզների դեմ կատաղի պայքար մղելուն զուգընթաց, կուլակները ձգտում են սղուկել կոլխոզների մեջ, վորպեսզի նրանց ներսից քայքայեն։ Լոկուզներ են արձակում— «Ամբողջ համայնքով դեպի կոլխոզ», «աշնանավար անել ամբողջ գյուղով»։

Պարզ ե, վոր չքավորներ ու միջակներ ինչքան ավելի մտնեն կոլխոզ, այնքան ավելի շուտ կիրականանա համատարած կոլեկտիվացումը, վոր կործանում ե սպառնում կուլակին։ Բայց յերբ կուլակը լոկուզ ե ձգում՝ «ամբողջ համայնքով դեպի կոլխոզ», դարձյալ միանգամայն պարզ ե, վոր կուլակը ցանկանում ե «համայնքի» և գյուղի հետ միասին կոլխոզ խցկվել և ներսից քայքայել այն։ Կուլակները սողալով անցնում են վար-

չուփյան նախագահ, տնտեսավար, բրիգադիր։ «Лыч» կոլխոզում (Ուկրալինա) յերևան են բերված 7 կուլակներ, նախկին կապալառուներ։ չովդարներ։ մինչև համատարած կոլեկտիվացումը նրանք ունեցել են յերեքական ձի, իսկ կոլխոզ են մտել մեկ սատկած ձիով։ «Путь Ильича» («Իլյիչի ուղին») կոլխոզում կուլակների մի խմբակն եր վարում ամբողջ գործը, իսկ նախագահը այդ կուլակային խմբակի ձեռքին խաղալիք ե յեղել։ «Завет Ильича» («Իլյիչի պատգամը») կոլխոզում (Հյուսիսային Կովկաս) թագնված են յեղել 44 նախկին ոֆիցերներ և կուլակներ։

Տեղական կազմակերպությունները չեն պայքարել կոլխոզների՝ ոտար տարրերով աղբոտված լինելու դեմ։

Մի շարք կոլխոզներում քացակայում ե մասսայական աշխատանքը, նկատվում ե աշխատանքային ղիսցիպլինայի անկում, չեն կատարվում պետական առաջադրանքները և կոլխոզի պարտականությունները պետու-

թյան հանդեպ: Անցյալ աշնան նախկին խո-
ւորի շրջանի մի շարք ռայոններում ուսու-
նողները հեռացնում էին կոլխոզներից
տաանյակ բատրակներին, յերես էին տալիս
կուլակներին, ստեղծում էին նրանցից հա-
տուկ բրիգադներ: Յեւ միայն «Պրավդա»-յի,
կոլխոզկենտրոնի և յերկրային որգանների
միջամտությունը վերջ դրեց այդ խայտա-
ռակություններին:

Յերբեմն ուսունիստական պրակտիկան
քանդում է լավագույն կոլխոզները: «Կար-
միր պարտիզան» կոլխոզի (Հյուսիսային Կով-
կաս) հատուկ քննությունը ցույց տվեց,
վոր 1.196 տնտեսություն միացնող այդ կոլ-
խոզը հաջող կատարել է հացամթերումները,
վճարել է պարտքերը ըստ բոլոր վարկերի,
ծավալել է հասարակական շինարարություն
ներքին միջոցների հաշվին, կառուցել է
կաթնա-ապրանքային ֆերմա: Բայց վերջերս
վարչության և կուսբջիջի աջ ուսունիս-
տական պրակտիկան դրել է կոլխոզը քայ-

քայման սպառնալիքի տակ: Կոլխոզում այժմ
տիրում է աշխատանքային դիսցիպլինայի
կատարյալ անկում, շորթողություն, բերքի
բաշխումը կատարվում է ուսողների սխառ-
մով, նույն սկզբունքով են բաշխվում և կե-
րերը: Կոլխոզում կան ձայնագրեր, կու-
լակներ, սպեկուլյանտներ, վոստիկաններ և
կրոնավորներ: Դրանց դեռ չեն վտառել կոլ-
խոզից: Վերջին յերկու ամսվա ընթացքում
կոլխոզ չի ընդունված վոչ մի մենատնտե-
սավար: Չքավորության և բատրակության
կոլեկտիվացման ֆոնդերը չեն ոգտագործ-
վում, չքավորների և բատրակների մեջ աշ-
խատանք չի տարվում, մասսայական աշխա-
տանքը չի ծավալված, արտադրական խոր-
հրդակցությունները բացակայում են:

Մի շարք շրջաններ ու կոլխոզներ դեռ
այժմ ել, դեկավարող աշխատողների ուսու-
նողներին պրակտիկայի պատճառով,
վոչինչ չեն արել գարնանացանին պատրաստ-
վելու համար:

կուլակուլթյան կատաղի ընդդիմադրու-
թյունը պահանջում է կուսակցութեան յու-
րաքանչյուր անդամից, յուրաքանչյուր կու-
լտոգնիկից, դեռ ևս. կոլխոզ չմտած, բայց
արդեն անհատական տնտեսութեանից կոլեկ-
տիվ տնտեսութեան անցնել վճռած յուրաքան-
չյուր չգավորից, բատրակից ու միջակից
հատուկ զգաստութեան և աչալըջութեան:

Բացի դրանից, պետք է մերկացնել ուղոր-
տունիստներին, նրանց քշել կոլխոզներից:

Այլ ու «ձախ» ուղորտունիստները տեղ
չունեն կոլխոզներում:

Այլ ուղորտունիստները — կուլակի ագենտ-
ներն են, նրանք ծածկում են կուլակին,
նրանք բթացնում են մասսաների աչալըջու-
թյունը կուլակների վնասարարութեան նկատ-
մամբ:

Հազարավոր այլ որինակներից վերցրած
այս մի քանի որինակները ցույց են տալիս, թե
վորպիսի վնաս է հասցնում սոցիալիզմի գոր-
ծին ուղորտունիստական պրակտիկան: Կո-

լեկտիվացման գործը առաջ տանելու համար
հարկավոր է ավելի վճռականորեն և ավելի
անողորձաբար մերկացնել ուղորտունիզմը
պրակտիկայում, հարկավոր է ուղորտունիս-
տական տարրերին վտարել կոլխոզներից:
Հարկավոր է կոլխոզնիկների փիլիոնավոր
մասսաներին զորակոչել ամեն տեսակի ուղոր-
տունիզմի և դրա նկատմամբ ցույց տրվող
հաշտվողականութեան դեմ, վորովհետև միայն
այդ պայմանով մենք կկատարենք և կգերա-
կատարենք հնգամյակի յերրորդ, վճռական
տարվա խնդիրները:

«Բոյլչեիկական հարձակման ելութեանը
կայանում է նախ և առաջ նրանում, — ասում
էր ընկ. Ստալինը կուսակցութեան XVI
համագումարում, — վոր մոբիլիզացիայի յեն-
թարկենք մասսաների դասակարգային աշա-
լըջութեանը և հեղափոխական ալտիվու-
թեանը մեր յերկրի կապիտալիստական տար-
րերի դեմ, մոբիլիզացիայի յենթարկենք մաս-
սաների ստեղծագործական նախաձեռնու-

թյունը և ինքնագործնեյությունը մեր հիմ-
նարկների և կազմակերպությունների բյու-
րոկրատիզմի դեմ, վորը ծածկում ե մեր հա-
սարակակարգի խորքերում թագնված հսկա-
յական միջոցները, թույլ չի տալիս ոգտա-
գործել նրանց. կազմակերպենք մրցումը և
մասսաների աշխատանքային վերելքը աշ-
խատանքի արտադրողականության բարձրաց-
ման համար, սոցիալիստական շինարարու-
թյան ծավալման համար»:

Միմիայն լավ հիշելով մեր կուսակցու-
թյան ցուցմունքները, միմիայն իրականում
իրագործելով այն խնդիրները, վոր դրել են
կուսակցությունը և կառավարությունը կու-
լտոզների առաջ, կուլտոզիկների միլիոնավոր
մասսաները—խորհրդային իշխանության այդ
ամուր նեցուկը—կկարողանան ամրացնել
ու լայնացնել կուլեկտիվ արտադրությունը,
գրավել մենատնտեսավար չքավորների և
միջակների նոր միլիոններ կուլտոզների մեջ
և իրագործել հիմնական խնդիրը — համատա-
րած կուլեկտիվացման ավարտումը և կուլա-
կության, վորպես դասակարգի, լիկվիդացիան
համատարած կուլեկտիվացման հիման վրա:



1.3431

С 31-И
1280

5 407.

Цена 5 коп.
С. Х. 2. 344



БЕЛОВ
Сильнее огонь по
кулацкой агентуре
в колхозах
(Перевод с русского)

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.
Москва, центр, Никольская, 10.